

## ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔԸ

Անոնք երեքը, Դուրեկան, Բարգէն և  
Թորգոմ սրբազնները, հայ եկեղեցական-  
նութեան փերջն սերունդի ներկայացու-  
ցիչներն էին՝ իրենց բացառիկ և հմայլչ  
յատկութիւններովը: Անոնց անդարձ մեկ-  
նումը մեր եկեղեցին կը քրէէ անցնող գա-  
րերու հոգենէր և ազգասէր հայրապետներու  
յաշորդութենէն, որ յանձին անոնց՝ մեզի  
կը բերէր աստուածաշնչական նահապետ-  
ներու պատկառելի գէմքերը իրենց ամրող գիշութեամբ, հեղինակութեամբ և իմաս-  
տութեամբ:

Դուրեկան Սրբազնն քրիստոնէական նե-  
րողամտութեան և բարութեան տիպարն էր,  
վեր՝ մարգարին փոքրութիւններէ, մարտ-  
կալին կենաքի հոգեկան ապրումներու կա-  
րելիքնեան իրականացումն էր, հոգայ միա-  
ցականութեան և խորհրդապաշտ հոգիի մը  
ներդաշնակ միաւորութիւնը: Անիկա Նոր-  
Ուիսի Սիրոյ առաքեալին պէս իր հայեցո-  
ղական կեանքի անոյշ ապրումները կը բաշ-  
խէր մեզի: Վեհութիւն եւ քաղցրութիւն  
ծորող իր անձնաւորութիւնը Աստուծոյ սի-  
րոյն կենդանի ապացոյցն էր: Անիկա Աս-  
տուծոյ սէրը կը բերէր մեզի:

Բարգէն վեհափառ, համակ եռանդ ու  
նախանձայուղութիւն, Հայուն եսային էր.  
որ մէզիի դրած ամէն նկատում, ինքինքը  
զոհած իր կուռումին, հուժկու կեղինակու-  
թեամբ մը նուիրուած էր Հայ եկեղեցին,  
զայն նկատելով իրեն իրական կեանքի մը  
ազրիւը, աստուածային կեանքի մը՝ որ կը  
կերտէ Հայուն նկարագիրը իր անհատական  
և ազգայն երեսներով միանգամայն: Իրեն  
համար եկեղեցին Աստուծոյ և Ազգին գա-  
ղափարին մարմնացումն էր, որ հաղորդ  
կ'ընէ զմեզ մեր հայրերուն և մեր Աստու-  
ծոյն: Սյո համոզումը հաւատոյ հանգանակի  
մը նուիրականութիւնն ունէր իրեն համար,  
ու ինքն ալ Խարսչէլ Սեծ Մարգարէին պէս  
գերափշտակուած այդ գաղափարով, ուժ-  
գին և շեշտ բառերով Կ'արտայայտէր զայն  
բանիւ, գրով և գործով, Հայ ժողովուր-  
դին փրկութեան իրեւ միակ ազգակը:

Իսկ Թորգոմ Պատրիարք՝ այդ երկուք

կամբջող խոհական մտքի և սիրով զսպա-  
նակուած եռանգուն հոգիի մը մարմնացումն  
էր, միենայն տեսիլներով և գաղափարնե-  
րով մնած:

Երբ Հայ ժողովուրդը կորմնցուց իր  
հոգիին արտայատութիւնը եղող առաջին  
երկուքը, ամէնուն աչքերը իրեն յառեցան,  
ամէնուն յոյսիդն ու ակնկալութիւնները Աւ-  
նոր վայ կեզրունացան, վասնի Ան միայն  
իրը ճշմարիտ հովիւ և իմաստուն առաջ-  
նորդ կնարա հովուել իր ցրուած հօտը, և  
խրախուսել յուսաւթումի մատնուած իր ժո-  
ղովուրդը: Սփիւռքի մէջ նոր գարերու փա-  
րաւոններու նորահնար ձուլումի և ապազ-  
գայնացման վտանգներուն ենթակայ մեր  
ժողովուրդին Մովսէսն էր Ան որ իր խօսքին  
հմայքովը, իր անձին շնորհքովը և մանա-  
ւածի իր կեղինակաւոր գրիչովը, ամէնուն  
կը հասանչէր խասուծոյ խասուումին և ազ-  
գին ապագային անմեռ յոյսը: Մեր միակ  
հովուածեան էր Սփիւռքի մէջ, որուն ներ-  
կայութիւնը ամիենուորէք՝ Սինայէք իշոնդ Աս-  
տուծոյ պատգամարեր առաքեալի մը տը-  
պաւորութիւնը կը գործէր, և ամէնուն կը  
ներչնչէր առաջանքին դիմագրաւելու կո-  
րովը և Աւետեաց երկրին յոյսը:

Այս վերջինն ալ կ'իյնայ ահա, առանց  
իր յոյսերուն ամբողջական իրականացաւմը  
մեկնելու, որը ձգելով իրմավի խանդավառ  
ու իր շունչով օծուն սերունդ մը, և ան-  
գլուխ իր ժողովուրդը:

Եյէ երեք առաքելատիպ դէմքերու  
մեկնումը յուսաւթումի ամպը կը պատէ  
ամէնուս սիրտը:

Ցոյի միակ նշոյլը անոնց հոգիի և  
մտքի սերունդին, իրեւ նոր Յեսունիր,  
անոնց նուիրական գործը շարունակելու  
սրբազն և խոտը կրնայ ըլլալ: ասով միայն  
այդ երեք երջանիկ հոգիները իրենց երազ-  
ները մասսամբ իրականացած համարելով՝  
պիտի ցնծան իրենց յաւիտենական կայան-  
քին մէջ:

ՍԵՐՈՎԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ